ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը ի նպաստ հայկական սպորտի զարգացման,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով սպորտային գիտության կիրառական և պրակտիկ հնարավորությունները կրթության կազմակերպման գործում,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ համատեղ հետազոտություններ իրականացման, ուսանողների գործնական դասերի կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության շրջանակներում Հայաստանի սպորտի զարգացման հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին (այսուհետև՝ Ինստիտուտ) ներկայացնում է մարզչական և սպորտային մանկավարժության կրթական ծրագրով ուսումնառության և ոլորտի շարունակական զարգացման հետ կապված խնդիրներ, իսկ Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում ընդունել այդ խնդիրները և գիտական հենքի վրա ձևավորել մագիստրոսական

թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաները՝ համապատասխան ամբիոնում:

2.2 Հիմնադրամը պատրաստակամ է աջակցություն ցուցաբերել Ինստիտուտի մարզաբազաների արդիականացման գործում, իսկ Ինստիտուտը պարտավորվում է հոգ տանել արդիականացված մարզական տարածքների նկատմամբ և դրանք օգտագործել միայն ըստ նշանակության՝ կազմակերպելով ուսանողների գործնական դասերը և մարզումային գործընթացը:

2.3 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.3.1 Կողմերի ներկայացուցիչներից կազմված համատեղ խորհուրդների ձևավորման, մարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով,

2.3.2 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.3.3 Գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման շուրջ,

2.3.4 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման միջոցով,

2.3.5 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական և մարզական ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների և փորձաքննությունների իրականացման աշխատանքներում,

2.3.6 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու գործում,

2.3.7 Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման միջոցով:

3. Համագործակցության սկզբունքները

3.1 Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հետագա համագործակցությունը կարգավորվելու է Կողմերի միջև կնքվող առանձին պայմանագրերով:

4.6 Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:

4.7 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. մարտի 13–ին:

4.8 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Բժշկական գենետիկայի կենտրոն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Հայաստանի սպորտի զարգացման հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Հովսեփ Էմին 123/1
Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	Նախագահ՝ Գաբրիել Ղազարյան
ստորագրություն, Կ.S.	ստորագրություն, Կ.S.